Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/2470/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 ապրիլի 2024 թվականի

ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով հայցվոր «ԵՐՎԱԴԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«ԵՐՎԱԴԱ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության թիվ ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-10/1 ծածկագրով փակ նպատակային մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված նախաորակավորման ընթացակարգի թիվ 2 արձանագրությունը՝ «Միռռոս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

08.04.2024 թվականի Դատարանի որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով վերադարձվել է հայցվորին՝ դիմումում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին դատարան ներկայացնելու համար:

18.04.2024 թվականին հայցվորը Դատարանի 08.04.2024 թվականի որոշման մեջ նշված թերությունները վերացնելուց հետո կրկին Դատարան է ներկայացրել հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը:

Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով դատավոր Մարինա Տաշչյանի աշխատակազմին է հանձնվել 18.04.2024 թվականին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ,ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Տվյալ դեպքում, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/2474/02/24 քաղաքացիական գործով պետք է նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.9-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԵՐՎԱԴԱ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության թիվ ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-24-10/1 ծածկագրով փակ նպատակային մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված նախաորակավորման ընթացակարգի թիվ 2 արձանագրությունը՝ «Միռռոռս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/2474/02/24 քաղաքացիական գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 05.06.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆ**